Թողարկման 18-րդ տարի

# ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2011

հունվար

թիվ 1 (149)

## Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

5 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, «Հայր և որդի Երիցյաններ» ՍՊԸ-ի արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները մի շարք ՓԲԸ-ների մասնաճյուղեր գրանցելու, ինչպես նաև մի շարք ՍՊԸ-ների ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառելու և հաշվառումից հանելու, «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» ՓԲԸ «Խորենացի» մասնաճյուղը գրանցումից հանելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 2 ՓԲԸ-ի, 2 ՍՊԸ-ի նկատմամբ տուգանք կիրառելու և 1 ՓԲԸ-ի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 239-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 292-Ն որոշումը «2010-2011 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

12 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 293-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2010-2011 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Թորոս Ռոսլին-800», «Արտաշատ-2200», «Անի-1050», «Միսաք Մեծարենց-125», «Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակ» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

16 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 296-Ն որոշումը «Արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի առուվաճառքի սակարկությունների ընթացքում գնային չարաշահումների արգելումը, գնային չարաշահումների ազդակները և Կենտրոնական բանկին գնային չարաշահումների մասին տեղեկացման կարգը» կանոնակարգ 11/01-ը հաստատելու մասին»

20 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 301-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 225-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

21 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

## *ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ*

- ***Վերաֆինանսավորման տոկոսադրույքը*** անփոփոխ է թողնվել՝ 7.25% (որոշում թիվ 2Ա):
- ***Ուժը կորցրած են ճանաչվել*** «Հայր և որդի Երիցյաններ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը տրամադրված արտարժույթի առուվաճառքի լիցենզիաները (որոշումներ թիվ 7Ա, 8Ա):
- ***Գրանցվել են*** «Ֆինքա» ունիվերսալ վարկային կազմակերպություն» և «Անելիք բանկ» փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Արթիկ» և «Սևան» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/8Ա, 1/27Ա):
- ***Ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառվել են*** «Ս. Մ. Լայնս» և «Էյէյ Ֆայնեյշնլ սերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (որոշումներ թիվ 1/14Ա, 1/33Ա):
- ***Հաշվառումից հանվել են*** ապահովագրական գործակալների ռեգիստրում հաշվառված «Սոյուզ Ատլանտիդի» և «Զ.Ա.Մ.» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունները (որոշում թիվ 1/35Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «Գլաձոր ունիվերսալ վարկային կազմակերպություն» փակ բաժնետիրական ընկերության «Խորենացի» մասնաճյուղը (որոշում թիվ 1/66Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 2 փակ բաժնետիրական, 2 սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝630000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/11Ա, 1/65Ա, 1/57Ա, 1/58Ա) և 1 փակ բաժնետիրական ընկերության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշում թիվ 1/59Ա):

## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի թիվ 145-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին*[*]

Հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25-րդ հոդվածը, 29-րդ հոդվածի 1-ին մասը և 41-րդ հոդվածը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ը հաստատելու մասին» թիվ 145-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ՝

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. սեպտեմբերի 14-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 18.11.2010 թ. (ՀՀԳՏ N3 (386), 1.02.2011):*

1) նախաբանում «22-րդ և 23-33.1-րդ» բառերը փոխարինել «22-րդ, 23-33.1-րդ և 41-րդ» բառերով:

2) Որոշումը լրացնել 2.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.1. Օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի բանկային գործունեության ռիսկայնությունը զսպելու նպատակով սահմանել, որ ավանդային, վարկային, ֆինանսական գործառնությունների և ներդրումների իրականացման համար օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գործունության ամբողջ ընթացքում պետք է պահպանվեն հետևյալ պահանջները.

1) մասնաճյուղն ստեղծած օտարերկրյա բանկի վարկանիշը չպետք է նվազի սույն որոշմամբ հաստատված կանոնակարգի 5-րդ կետով սահմանված վարկանիշից,

2) մասնաճյուղն ստեղծած օտարերկրյա բանկը չպետք է խախտի օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկրի բանկային գործունեության կարգավորումը և (կամ) վերահսկողությունն իրականացնող մարմնի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների պահանջները,

3) մասնաճյուղն ստեղծած օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկիրը համարվում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իմաստով համագործակցող երկիր և տվյալ երկրի համար Ֆինանսական միջոցառումների աշխատանքային խմբի (Financial Action Task Force) (այսուհետ՝ ՖԱԹՖ) կամ նմանատիպ գործունեությամբ զբաղվող այլ միջազգային կառույցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համակարգի անհամապատասխանության վերաբերյալ չի հրապարակվել որևէ հայտարարություն,

4) Կենտրոնական բանկի և մասնաճյուղն ստեղծած օտարերկրյա բանկի գրանցման երկրի բանկային վերահսկողությունն իրականացնող մարմնի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) բանկային վերահսկողության ոլորտում համագործակցության վերաբերյալ:»:

2. Որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը.

1) 5-րդ կետը լրացնել «է», «ը», «թ» և «ժ» ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«է) օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝ հիմնավորող փաստաթուղթ առ այն, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի վարկանիշն ըստ միջազգային վարկանշային գործակալությունների (Ստանդարտ և Փուրզ, Ֆիթչ կամ Մուդիզ) կողմից տրամադրված երկարաժամկետ ավանդների ներգրավման վարկանիշների առնվազն եղել է ԱԱ-(Aa3)՝ սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվա դրությամբ: Ընդ որում, եթե օտարերկրյա բանկն ունի երկու կամ երեք վարկանշային գործակալությունների կողմից տրված վարկանիշներ, ապա հիմք է ընդունվում դրանցից խստագույնը (ամենացածրը),

ը) օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝ հիմնավորող փաստաթուղթ առ այն, որ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկրի բանկային վերահսկողությունը բավարարում է Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի կողմից մշակված «Արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքները»: Երկրի բանկային վերահսկողությունը համարվում է «Արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքները» բավարարող, եթե այն, Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսական հատվածի գնահատման ծրագրի շրջանակներում (ԷՖՍԱՓ) տրված գնահատականի համաձայն, բավարարում է բոլոր հիմնարար սկզբունքները՝ Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի կողմից սահմանված գնահատման սանդղակի առաջին (համապատասխանող) կամ երկրորդ (մեծամասամբ համապատասխանող) մակարդակով: Ընդ որում, սույն ենթակետում նշված գնահատականը պետք է տրված լինի սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվանից ոչ շուտ, քան 5 տարվա ընթացքում,

թ) օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի կողմից տրված պարտավորագիր (երաշխավորագիր)՝ Հայաստանի Հանրապետության տարածքում օտարերկրյա բանկի մասնաճյուղի կողմից այդ մասնաճյուղի գործունեությունից բխող պարտավորությունները չկատարելու դեպքում այդ պարտավորությունները օտարերկրյա բանկի կողմից առանց որևէ պայմանի (նախապայմանի) անհապաղ կատարելու վերաբերյալ,

ժ) օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկրի բանկային վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից տրված հավաստումն առ այն, որ օտարերկրյա բանկը չի խախտել տվյալ երկրի բանկային գործունեության կարգավորումը և (կամ) վերահսկողությունն իրականացնող մարմնի կողմից սահմանված տնտեսական նորմատիվների պահանջները սույն կետում նշված դիմումը Կենտրոնական բանկ ներկայացնելու օրվան նախորդող երկու տարվա ընթացքում, իսկ եթե մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի գործունեությունը պակաս է երկու տարուց, ապա՝ գործունեության ողջ ընթացքում:»:

2) 14-րդ կետը լրացնել «թ», «ժ» և «ժա» ենթակետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«թ) օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝ մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկիրը համարվում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իմաստով համագործակցող երկիր և տվյալ երկրի համար ՖԱԹՖ-ի կամ նմանատիպ գործունեությամբ զբաղվող այլ միջազգային կառույցի կողմից փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման համակարգի անհամապատասխանության վերաբերյալ չի հրապարակվել որևէ հայտարարություն,

ժ) օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝ Կենտրոնական բանկի և մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի գրանցման երկրի բանկային վերահսկողությունն իրականացնող մարմնի միջև առկա է համաձայնագիր (փոխըմբռնման հուշագիր) բանկային վերահսկողության ոլորտում համագործակցության վերաբերյալ,

ժա) օտարերկրյա բանկի մասնաճյուղի դեպքում՝ Կենտրոնական բանկում կամ Կենտրոնական բանկի համաձայնությամբ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող որևէ բանկում մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի անունով ներդրվել է ավանդ՝ առնվազն 200 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամի կամ ավանդը ներդրվելու օրվա դրությամբ 200 միլիոն Հայաստանի Հանրապետության դրամին համարժեք արտարժույթի չափով, ընդ որում, ավանդի պայմանագրով պետք է նախատեսված լինի, որ ավանդը ավանդատուի պահանջով ենթակա է վերադարձման բացառապես Կենտրոնական բանկի նախնական համաձայնության դեպքում: Միևնույն ժամանակ, մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկն ստանձնել է անվերապահ պարտավորություն, համաձայն որի՝ այն դեպքում, երբ օրենքի համաձայն, ավանդի գումարը ենթակա է անվերապահ վերադարձման՝ անկախ կողմերի համաձայնությունից, վերադարձված գումարը համապատասխան բանկից ստանալուց հետո պարտավոր է 5 աշխատանքային օրվա ընթացքում որպես ավանդ մուծել Կենտրոնական բանկում կամ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող այլ բանկում՝ սույն ենթակետով սահմանված պայմաններով:»:

3) 16-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«16. Կենտրոնական բանկը կարող է մերժել բանկին լիցենզիայի տրամադրումը «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ կետով նշված հիմքերով, այդ թվում՝ նախնական հավանության տրամադրումից հետո, եթե*.

1) օտարերկրյա բանկի վարկանիշը նվազել է սույն կանոնակարգի 5-րդ կետի «է» ենթակետով սահմանված վարկանիշից և (կամ),

2) օտարերկրյա բանկը խախտել է մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկրի բանկային գործունեության կարգավորումը և (կամ) վերահսկողությունն իրականացնող մարմնի կողմից սահմանված տնտեսական որևէ նորմատիվի պահանջները և (կամ),

3) Արժույթի միջազգային հիմնադրամի և Համաշխարհային բանկի կողմից ֆինանսական հատվածի գնահատման ծրագրի շրջանակներում (ԷՖՍԱՓ) տրվել է նոր գնահատական՝ համաձայն որի մասնաճյուղ ստեղծող օտարերկրյա բանկի գրանցման վայրի երկրի բանկային վերահսկողությունը չի բավարարում Բանկային վերահսկողության բազելյան կոմիտեի կողմից մշակված «Արդյունավետ բանկային վերահսկողության հիմնարար սկզբունքները»՝ սույն կանոնակարգի 5-րդ կետի «ը» ենթակետով սահմանված կարգով: Ընդ որում, սույն կանոնակարգի 5-րդ կետի «ը» ենթակետով սահմանված պահանջները կիրառելի են օտարերկրյա բանկի մասնաճյուղի նկատմամբ նաև օտարերկրյա բանկի մասնաճյուղի լիցենզիայի տրամադրումից հետո:»:

4) 90.1-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«90.1. Բանկը, բանկի մասնաճյուղը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը արտարժույթի առուվաճառքի գործառնություններ իրականացնելիս փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում են բանկի տարածքում: Բանկը, բանկի մասնաճյուղը, օտարերկրյա բանկի մասնաճյուղը փոխարժեքներն արտացոլող վահանակը տեղադրում են այնպես, որպեսզի այն փակ տարածքից դուրս տեսանելի չլինի: Բանկից դուրս վահանակ ունենալու դեպքում, վահանակի վրա նշվում են միայն լիցենզավորված անձի անվանումը, լիցենզիայի համարը, աշխատանքային օրերը և ժամերը:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ*
*28 սեպտեմբերի 2010 թ., N239-Ն*

* *Պաշտոնական հրապարակման մեջ սպրդել է վրիպակ:*

*2010-2011 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2010 թվականի դեկտեմբերի 27-ից շրջանառության մեջ դնել «Ավետարանի տեսարանները հայ մանրանկարչությունում» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկված «Ավետում», «Մոգերի երկրպագություն», «Մուտք Երուսաղեմ» և «Համբարձում» արծաթե հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունը, որը հուշադրամների ուրվագծերի հետ մեկտեղ ներկայացված է Հավելվածում (կցվում են):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ*
*12 նոյեմբերի 2010 թ., N292-Ն*

*Հավելված*
*Հաստատված է*
*ՀՀ կենտրոնական բանկի*
*խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի*
*թիվ 292-Ն որոշմամբ*

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 1. «Ավետում» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Ավետարանի տեսարանները հայ մանրանկարչությունում» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Ավետում» արծաթե հուշադրամը:

**Հուշադրամի դիմերեսի** վերևի մասում մակագրված է «Հայաստանի Հանրապետություն», աջ կողմում՝ «Republic of Armenia»: Վերևի աջ անկյունում պատկերված է ՀՀ զինանշանը, ձախ անկյունում հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2010», ներքևի մասում հուշադրամի անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ»: Հուշադրամի կենտրոնում «Ավետում», «Մոգերի երկրպագություն», «Մուտք Երուսաղեմ» և «Համբարձում» տեսարանների խորհրդանշական պատկերներն են՝ ավետաբեր Աղավնին, նորածին Հիսուսը, արմավենու ճյուղերով շրջապատված Հիսուսը և Հիսուսը համբարձվելիս:

**Հուշադրամի դարձերեսին** պատկերված են Սուրբ կույս Մարիամը և Գաբրիել հրեշտակապետը, որը ավետում է Մարիամին Սուրբ հոգուց հղիանալու և Հիսուս Քրիստոսի ծննդյան մասին: Հուշադրամի վերևի աջ մասում մակագրված է «Ավետում», իսկ ձախ մասում՝ «Annunciation»:

Հուշադրամը՝ թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Հարություն Սամուելյանը:

Հուշադրամը հատվել է Ֆինլանդիայի դրամահատարանում:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 9-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 17.01.2011 թ. (ՀՀԳՏ N3 (386), 1.02.2011):*

**Հուշադրամի բնութագիրը**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը և հարգը | արծաթ, $999^0$ |
| Ձանգվածը | 31,1 գ |
| Չափը | 32x32 մմ |
| Դրամաշուրթը | հարթ |
| Որակը | պրուֆ՝ տամպոտպագրությամբ |
| Տպաքանակը | մինչև 6000 հատ |

### 1.1. «Ավետում» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը







## 2. «Մոգերի երկրպագություն» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Ավետարանի տեսարանները հայ մանրանկարչությունում» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Մոգերի երկրպագություն» արծաթե հուշադրամը:

**Հուշադրամի դիմերեսի** վերևի մասում մակագրված է «Հայաստանի Հանրապետություն», աջ կողմում՝ «Republic of Armenia»: Վերևի աջ անկյունում պատկերված է ՀՀ զինանշանը, ձախ անկյունում հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2010», ներքևի մասում հուշադրամի անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ»: Հուշադրամի կենտրոնում «Ավետում», «Մոգերի երկրպագություն», «Մուտք Երուսաղեմ» և «Համբարձում» տեսարանների խորհրդանշական պատկերներն են՝ ավետաբեր Աղավնին, նորածին Հիսուսը, արմավենու ճյուղերով շրջապատված Հիսուսը և Հիսուսը համբարձվելիս:

**Հուշադրամի դարձերեսին** պատկերված են մանուկ Հիսուսն իր մոր՝ Մարիամի հետ և մոգերը, որոնք նրան նվերներ են մատուցում: Հուշադրամի վերևում մակագրված է՝ «Մոգերի երկրպագություն», իսկ ձախ մասում՝ «Adoration of the Magi»:

Հուշադրամը՝ թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Հարություն Սամուելյանը:

Հուշադրամը հատվել է Ֆինլանդիայի դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը և հարգը | արծաթ, $999^0$ |
| Ձանգվածը | 31,1 գ |
| Չափը | 32x32 մմ |
| Դրամաշուրթը | հարթ |
| Որակը | պրուֆ՝ տամպոտպագրությամբ |
| Տպաքանակը | մինչև 6000 հատ |

### 2.1. «Մոգերի երկրպագություն» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը







## 3. «Մուտք Երուսաղեմ» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Ավետարանի տեսարանները հայ մանրանկարչությունում» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Մուտք Երուսաղեմ» արծաթե հուշադրամը:

**Հուշադրամի դիմերեսի** վերևի մասում մակագրված է «Հայաստանի Հանրապետություն», աջ կողմում՝ «Republic of Armenia»: Վերևի աջ անկյունում պատկերված է ՀՀ զինանշանը, ձախ անկյունում հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2010», ներքևի մասում հուշադրամի անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ»: Հուշադրամի կենտրոնում «Ավետում», «Մոգերի երկրպագություն», «Մուտք Երուսաղեմ» և «Համբարձում» տեսարանների խորհրդանշական պատկերներն են՝ ավետաբեր Աղավնին, նորածին Հիսուսը, արմավենու ճյուղերով շրջապատված Հիսուսը և Հիսուսը համբարձվելիս:

**Հուշադրամի դարձերեսին** պատկերված է ավանակի վրա նստած Քրիստոսը՝ օրհնող աջը բարձրացրած: Նրան հետևում են աշակերտները, իսկ առջևում Երուսաղեմի բնակիչներն են, որոնք հագուստներ ու ճյուղեր են նետում ճանապարհին:

Հուշադրամի վերևում մակագրված է «Մուտք Երուսաղեմ», իսկ ձախ մասում՝ «Entry into Jerusalem»:

Հուշադրամը՝ թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Հարություն Սամուելյանը:

Հուշադրամը հատվել է Ֆինլանդիայի դրամահատարանում:

### Հուշադրամի բնութագիրը

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը և հարգը | արծաթ, $999^0$ |
| Զանգվածը | 31,1 գ |
| Չափը | 32x32 մմ |
| Դրամաշուրթը | հարթ |
| Որակը | պրուֆ՝ տամպոտպագրությամբ |
| Տպաքանակը | մինչև 6000 հատ |

### 3.1. «Մուտք Երուսաղեմ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը






### 4. «Համբարձում» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը «Ավետարանի տեսարանները հայ մանրանկարչությունում» միջազգային դրամագիտական ծրագրի շրջանակում թողարկել է 1000 դրամ անվանական արժեքով «Համբարձում» արծաթե հուշադրամը:

**Հուշադրամի դիմերեսի** վերևի մասում մակագրված է «Հայաստանի Հանրապետություն», աջ կողմում՝ «Republic of Armenia»: Վերևի աջ անկյունում պատկերված է ՀՀ զինանշանը, ձախ անկյունում հուշադրամի թողարկման տարեթիվն է՝ «2010», ներքևի մասում հուշադրամի անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ»: Հուշադրամի կենտրոնում «Ավետում», «Մոգերի երկրպագություն», «Մուտք Երուսաղեմ» և «Համբարձում» տեսարանների խորհրդանշական պատկերներն են՝ ավետաբեր Աղավնին, նորածին Հիսուսը, արմավենու ճյուղերով շրջապատված Հիսուսը և Հիսուսը համբարձվելիս:

**Հուշադրամի դարձերեսին** պատկերված են Հիսուս Քրիստոսը և հրեշտակները, որոնք դեպի երկինք են տեղափոխում Հիսուսին: Նա գահի վրա նստած՝ աջ ձեռքով օրհնում է աշակերտներին, իսկ ձախում պահում է գալարափաթեթը:

Հուշադրամի վերևում մակագրված է «Համբարձում», իսկ ձախ մասում՝ «Ascension»:

Հուշադրամը՝ թափանցիկ պատիճով և իսկության հավաստագրով, տեղադրված է տուփի մեջ:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Հարություն Սամուելյանը:

Հուշադրամը հատվել է Ֆինլանդիայի դրամահատարանում:

### Հուշադրամի բնութագիրը

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը և հարգը | արծաթ, $999^0$ |
| Զանգվածը | 31,1 գ |
| Չափը | 32x32 մմ |
| Դրամաշուրթը | հարթ |
| Որակը | պրուֆ՝ տամպոտպագրությամբ |
| Տպաքանակը | մինչև 6000 հատ |

### 4.1. «Համբարձում» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը






*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2010 - 2011 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Թորոս Ռոսլին-800», «Արտաշատ-2200», «Անի-1050», «Միսաք Մեծարենց-125», «Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակ» հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «է» կետը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. 2011 թվականի հունվարի 10-ից շրջանառության մեջ դնել «Թորոս Ռոսլին-800», «Արտաշատ-2200», «Անի-1050», «Միսաք Մեծարենց-125», «Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակ» հուշադրամները:

2. Հաստատել սույն որոշման 1-ին կետով սահմանված հուշադրամների նկարագրությունը, որը հուշադրամների դիմերեսի և դարձերեսի ուրվագծերի հետ մեկտեղ ներկայացված է Հավելվածում (կցվում է):

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ*
*12 նոյեմբերի 2010 թ., N293-Ն*

*Հավելված*
*Հաստատված է*
*ՀՀ կենտրոնական բանկի*
*խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի*
*թիվ 293-Ն որոշմամբ*

## ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### 1. «Թորոս Ռոսլին-800» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Թորոս Ռոսլինի ծննդյան 800-ամյակին նվիրված հուշադրամ:

**Հուշադրամի դիմերեսին** պատկերված է Թորոս Ռոսլինի մանրանկարչությունից դրվագ: Հուշադրամի անվանական արժեքը՝ «ՏԱՍԸ ՀԱԶԱՐ ԴՐԱՄ» և «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունները տեղադրված են դրամի շրջագծով: Հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2011», տեղադրված է հուշադրամի վերևի ձախ հատվածում:

**Հուշադրամի դարձերեսին** պատկերված է Թորոս Ռոսլինի մանրանկարչությունից դրվագ: Կիսաշրջագծերով՝ «ԹՈՐՈՍ ՌՈՍԼԻՆ» և «TOROS ROSLIN», իսկ ներքևի մասում «800» մակագրություններն են:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 9-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 13.01.2011 թ. (ՀՀԳՏ N3 (386), 1.02.2011):*

**Հուշադրամի բնութագիրը**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 10000 դրամ |
| Մետաղը | ոսկի, $900^0$ |
| Քաշը | 8,6 գ |
| Տրամագիծը | 22,00 մմ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Որակը | պրուֆ |
| Տպաքանակը | 1000 հատ |

### 1.1. «Թորոս Ռոսլին-800» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը







### 2. «Արտաշատ-2200» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Հայաստանի 4-րդ մայրաքաղաք՝ Արտաշատի 2200-ամյակին նվիրված հուշադրամ:

**Հուշադրամի դիմերեսին** պատկերված է Արտաշատ մայրաքաղաքի դիցուհին՝ Տիխվեն, աշտարակաձև թագով: Հուշադրամի անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ», տեղադրված է ներքևի հատվածում, իսկ շրջագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» մակագրությունն է և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2011»:

**Հուշադրամի դարձերեսին** հաղթության դիցուհի Նիկեի պատկերն է *Արտախատա մետրոպոլիս* հունարեն մակագրությունով: Հուշադրամը շրջագծով ձևավորված է քաղաքի պեղումների ժամանակ գտնված զարդաքանդակի գծագրությունով: Հուշադրամի ներքևի հատվածում մակագրված է «ԱՐՏԱՇԱՏ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ 2200»:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը | ոսկի $585^0$ |
| Քաշը | 15,6 գ |
| Չափսերը | 26,00 մմ |
| Դրամաշուրթը | հարթ |
| Որակը | հատուկ |
| Տպաքանակը | 1000 հատ |

### 2.1. «Արտաշատ-2200» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը







## 3. «Անի-1050» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Հայաստանի 12-րդ մայրաքաղաք՝ Անիի 1050-ամյակին նվիրված հուշադրամ:

**Հուշադրամի դիմերեսին** պատկերված է Անի քաղաքի դարպասներից մեկի վրա պահպանված քաղաքի զինանշանը՝ հովազի կենդանակերպ խորհրդանիշը: Հովազի քանդակից վեր պատկերված է շրջանաձև վարդյակ, որը խորհրդանշում է հավերժություն: Հուշադրամի անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ», տեղադրված է ներքևի հատվածում, իսկ շրջագծով՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ» մակագրությունն է և հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2011»:

**Հուշադրամի դարձերեսին** պատկերված է Անիի Մայր տաճարը: Հուշադրամը շրջագծով ձևավորված է տաճարի արտաքին զարդաքանդակներից մեկի գծագրությունով: Հուշադրամի ներքևի հատվածում մակագրված է «ԱՆԻ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ 1050»:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

### Հուշադրամի բնութագիրը

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը | ոսկի $585^0$ |
| Քաշը | 15,6 գ |
| Չափսերը | 26,00 մմ |
| Դրամաշուրթը | հարթ |
| Որակը | հատուկ |
| Տպաքանակը | 1000 հատ |

### 3.1. «Անի -1050» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը






## 4. «Միսաք Մեծարենց -125» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել է Միսաք Մեծարենցի ծննդյան 125-ամյակին նվիրված հուշադրամ:

**Հուշադրամի դիմերեսին** պատկերված են աստղեր, լուսին և փետրագրիչ. «Սիրերգ» բանաստեղծության մեկնաբանությունն է: Վերևի հատվածում տեղադրված է հուշադրամի թողարկման տարեթիվը՝ «2011»: Հուշադրամի եզրագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է, ներքևի մասում հուշադրամի անվանական արժեքը՝ «10000 ԴՐԱՄ»:

**Հուշադրամի դարձերեսին** Մեծարենցի դիմանկարն է: Աջ հատվածում ուղղահայաց տեղադրված են «ՄԻՍԱՔ ՄԵՇԱՐԵՆՑ», «1886» և «1908» մակագրությունները:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

### Հուշադրամի բնութագիրը

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 10000 դրամ |
| Մետաղը | ոսկի, $900^0$ |
| Քաշը | 8,6 գ |
| Տրամագիծը | 22,00 մմ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Որակը | պրուֆ |
| Տպաքանակը | 1000 հատ |

### 4.1. «Միսաք Մեծարենց-125» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը







## 5. «Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակ» հուշադրամի նկարագրությունը

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը թողարկել Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակին նվիրված հուշադրամ:

**Հուշադրամի դիմերեսին** պատկերված են Միաբանությունում գտնվող գրապահոցը և 1775 թ. մայիսի 30-ին կայսրուհի Մարիա Թերեզայի կողմից տրված հատուկ արտոնագիրը, որով ճանաչվում է Մխիթարյան միաբանության կրոնական կարգը: Հուշադրամի եզրագծով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ» մակագրությունն է: Թողարկման տարեթիվը՝ «2011», տեղադրված է ձախ հատվածում, իսկ անվանական արժեքը՝ «1000 ԴՐԱՄ», տեղադրված է ներքևի աջ մասում:

**Հուշադրամի դարձերեսին** պատկերված է Միաբանության շքամուտքը և նշանը: Կենտրոնում ուղղահայաց տեղադրված են «ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐՅԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ», իսկ վերևի աջ մասում՝ «200-ամյակ» մակագրությունները:

Հուշադրամի ուրվագծերի հեղինակն է Էդուարդ Կուրղինյանը:

Հուշադրամը հատվել է Նիդեռլանդների արքայական դրամահատարանում:

**Հուշադրամի բնութագիրը**

| | |
|---|---|
| Անվանական արժեքը | 1000 դրամ |
| Մետաղը | արծաթ, $925^0$ |
| Քաշը | 33,6 գ |
| Տրամագիծը | 40,00 մմ |
| Դրամաշուրթը | ատամնավոր |
| Որակը | պրուֆ |
| Տպաքանակը | 500 հատ |

**5.1. «Վիեննայի Մխիթարյան միաբանության հիմնադրման 200-ամյակ» հուշադրամի դիմերեսի և դարձերեսի ուրվագծերը**







## ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԸ

*«Արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի առուվաճառքի սակարկությունների ընթացքում գնային չարաշահումների արգելումը, գնային չարաշահումների ազդակները և Կենտրոնական բանկին գնային չարաշահումների մասին տեղեկացման կարգը» կանոնակարգ 11/01-ը հաստատելու մասին*[*]

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածը, «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7.1 հոդվածի 4-րդ մասը, «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածը, «Վարկային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասը և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 27-րդ հոդվածի 4-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հաստատել «Արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի առուվաճառքի սակարկությունների ընթացքում գնային չարաշահումների արգելումը, գնային չարաշահումների ազդակները և Կենտրոնական բանկին գնային չարաշահումների մասին տեղեկացման կարգը» կանոնակարգ 11/01-ը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

*ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ*
*12 նոյեմբերի 2010 թ., N296-Ն*

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 9-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 27.01.2011 թ. (ՀՀԳՏ N4 (387), 15.02.2011):*

*Հավելված*
*Հաստատված է*
*ՀՀ կենտրոնական բանկի*
*խորհրդի 2010 թվականի նոյեմբերի 9-ի*
*թիվ 296-Ն որոշմամբ*

# «ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ԵՎ ԱՐՏԱՐԺՈՒՅԹԻ ԱՌՈՒՎԱՃԱՌՔԻ ՍԱԿԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ԱՐԳԵԼՈՒՄԸ, ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ԱԶԴԱԿՆԵՐԸ ԵՎ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ»

## ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 11/01

### ԳԼՈՒԽ 1. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

1. Սույն կանոնակարգը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի առուվաճառքի սակարկությունների ընթացքում գնային չարաշահումների դեպքերը, ազդակները, ինչպես նաև գնային չարաշահումների մասին Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկին (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) տեղեկացման կարգը:

2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետությունում արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք, արտարժույթի առուվաճառք, արտարժույթի առուվաճառքի սակարկություններ իրականացնող անձանց, բանկերի, ներդրումային ընկերությունների, վարկային կազմակերպությունների վրա:

### ԳԼՈՒԽ 2. ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3. Սույն կանոնակարգում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

***1) բորսա***՝ արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզիա ունեցող անձը,

***2) կասկածելի գործարք***՝ գնային չարաշահումների վերաբերյալ կասկած հարուցող գործարք արտարժույթի առուվաճառքի կամ արտարժույթի առուվաճառքի սակարկությունների ընթացքում,

***3) սակարկությունների մասնակիցներ***՝ անձինք, որոնք բորսայի կանոնների համաձայն ձեռք են բերել բորսայի կողմից կազմակերպվող արտարժույթի առուվաճառքի սակարկություններին մասնակցության իրավունք,

***4) պատվեր***՝ արտարժույթով գործարքների կնքման նպատակով ներկայացվող հաճախորդի հանձնարարական, ինչպես նաև սակարկությունների մասնակցի կարգադրությունը, հանձնարարություն, հայտ կամ առաջարկ,

***5) առևտրային համակարգ***՝ էլեկտրոնային եղանակով արտարժույթի առուվաճառքի կամ արտարժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման, անցկացման և դրա հետ կապված տեղեկատվության մշակման և պահպանման համար բորսայի կողմից օգտագործվող տեխնիկական, ծրագրային և այլ միջոցների համախումբը,

***6) լավագույն փոխարժեք***՝ առևտրային համակարգ մուտքագրված՝ տվյալ տեսակի արտարժույթի գնման պատվերներում նշված առավելագույն փոխարժեքը կամ վաճառքի պատվերներում նշված ամենացածր փոխարժեքը,

***7) սպրեդ***՝ առևտրային համակարգ մուտքագրված որոշակի տեսակի արտարժույթի գնման պատվերներում նշված ամենաբարձր և վաճառքի պատվերներում նշված ամենացածր փոխարժեքների տարբերությունը,

***8) արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք, արտարժույթի առուվաճառք, արտարժույթի առուվաճառքի սակարկություններ իրականացնող անձ***՝ ըստ «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի:

4. Սույն կանոնակարգում օգտագործված այլ հասկացություններն ունեն «Արժեթղթերի շուկայի մասին», «Արժութային կարգավորման և արժութային վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի օգոստոսի 30-ի թիվ 444-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության տարածքում արտ-

արժույթի առուվաճառքի սակարկությունների կազմակերպման լիցենզավորումը, կարգավորումը և վերահսկողությունը» կանոնակարգ 11-ում կիրառվող նշանակությունները:

## ԳԼՈՒԽ 3. ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԸ

5. Արտարժույթի առուվաճառքի և արտարժույթի առուվաճառքի սակարկությունների ընթացքում գնային չարաշահումն արգելվում է:

6. Սույն կանոնակարգի իմաստով գնային չարաշահում է համարվում անձի կողմից (իր կամ հաճախորդի հաշվին)՝

1) այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որը հանգեցնում է կամ կարող է հանգեցնել արտարժույթի փոխարժեքի, դրա նկատմամբ պահանջարկի կամ առաջարկի ծավալի վերաբերյալ սխալ կամ ապակողմնորոշիչ պատկերի ստեղծմանը՝ բացառությամբ սույն կանոնակարգի 7-րդ կետով սահմանված դեպքերի,

2) այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որը հանգեցնում է արտարժույթի փոխարժեքի ոչ օրինաչափ շեղումների կամ արտարժույթի փոխարժեքի արհեստական մակարդակի սահմանմանը, բացառությամբ՝ սույն կանոնակարգի 7-րդ կետով սահմանված դեպքերի,

3) այնպիսի գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որն իրականացվում է կեղծ, անբարեխիղճ կամ թյուրիմացություն առաջացնող և (կամ) ապակողմնորոշիչ մեխանիզմների գործադրմամբ,

4) այնպիսի տեղեկությունների տարածումը, որոնք սխալ կամ ապակողմնորոշիչ պատկեր են ստեղծում արտարժույթի փոխարժեքների վերաբերյալ, այդ թվում՝ տվյալ արտարժույթի վերաբերյալ խեղաթյուրված տեղեկությունների տարածումը, եթե այդ տեղեկությունները տարածող անձը գիտեր կամ բավարար ուշադրություն ցուցաբերելու դեպքում կարող էր իմանալ դրանց՝ իրականությանը չհամապատասխանելու փաստի մասին,

5) սույն կետի 1-ից 4-րդ ենթակետերում նշված գործողություններ չհանդիսացող, սակայն նույնաբնույթ գործողությունները:

7. Սույն կանոնակարգի 0-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով նախատեսված գործողությունները գնային չարաշահում չեն համարվում, եթե գործարքը կնքող կամ գործարքի կնքման պատվեր տված անձի կատարած գործողություններն ունեն իրավաչափ նպատակներ:

8. Կենտրոնական բանկն անձի նպատակների իրավաչափությունը գնահատելիս, ի թիվս այլ գործոնների, հաշվի է առնում հետևյալ հանգամանքների բացակայությունը.

1) անձը գործել է՝ նպատակ ունենալով նվազեցնել այլ անձանց՝ գործարքներ կնքելու հնարավորությունը, կամ սահմանել կամ փոփոխել արտարժույթի փոխարժեքը, որի գծով անձն ունի բաց դիրք,

2) անձը գործարքն իրականացրել է որոշակի կոնկրետ ձևով՝ սխալ կամ ապակողմնորոշիչ պատկեր ստեղծելու նպատակով:

9. Կենտրոնական բանկն անձի նպատակների իրավաչափությունը գնահատելիս, ի թիվս այլ գործոնների, հաշվի է առնում հետևյալ հանգամանքների առկայությունը.

1) գործարքն ուղղված է երրորդ անձանց հանդեպ օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված պարտավորության կատարմանը,

2) գործարքն իրականացվել է այնպիսի եղանակով, որը հաշվի է առնում շուկայի արդար և արդյունավետ գործունեության անհրաժեշտությունը,

3) անձը ձեռնարկել է բոլոր խելամիտ քայլերը հաճախորդի համար լավագույն պայմաններով (առաջին հերթին հաշվի առնելով գինը, ծախսերը, իսկ հետո նաև այլ գործոնները) գործարքի իրականացման համար:

## ԳԼՈՒԽ 4. ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՄԱՆ ԱԶԴԱԿՆԵՐԸ

10. Գնային չարաշահման ազդակներն են.

1) որոշակի արտարժույթով գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որը կազմում է տվյալ բորսայում տվյալ արտարժույթով օրական գործարքների քանակի կամ ծավալի էական մասը, հատկապես, եթե այդ գործարքները հանգեցնում են տվյալ արտարժույթի կամ դրա վրա հիմնված՝ կարգավորվող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթի գնի էական փոփոխության,

2) որոշակի արտարժույթով գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որոնք իրականացվում են գործարքը կնքող կամ գործարքի կնքման պատվեր տվող անձի դիրքի փոփոխությամբ կարճ ժամանակահատվածի համար և կազմում են տվյալ բորսայում այդ արտարժույթով օրական գործարքների քանակի կամ ծավալի էական մասը, հատկապես, եթե դրանք ուղեկցվում են բորսայում տվյալ արտար-

ժույթի փոխարժեքի էական փոփոխությամբ: Սույն ենթակետի իմաստով դիրքի փոփոխություն է համարվում անձի կողմից նույն արտարժույթի համար գնման (վաճառքի), այնուհետև վաճառքի (գնման) պատվերներ ներկայացնելը,

3) որոշակի արտարժույթով գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որոնք կենտրոնացված են կարճ ժամանակահատվածում և առաջացնում են տվյալ արտարժույթի փոխարժեքի կարճաժամկետ փոփոխություն՝ չհանգեցնելով փոխարժեքի երկարաժամկետ փոփոխության,

4) բորսայում որոշակի արտարժույթով գործարքի կնքման պատվեր տալը, որը փոխում է տվյալ արտարժույթի գնման (վաճառքի) լավագույն փոխարժեքը և հեռացվում է առևտրային համակարգից մինչև այդ պատվերի բավարարումը,

5) բորսայում որոշակի արտարժույթով գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը, որոնք կենտրոնացված են առևտրային նստաշրջանի այնպիսի ժամանակահատվածում, երբ հաշվարկվում են փակման կամ այլ հաշվարկային փոխարժեքներ, և հանգեցրել են այդ փոխարժեքների էական փոփոխությունների,

6) որևէ անձի կողմից որոշակի արտարժույթով գործարքների կնքումը կամ դրանց կնքման պատվեր տալը տվյալ անձի կամ վերջինիս հետ փոխկապակցված անձի կողմից սխալ, ապակողմնորոշիչ կամ խեղաթյուրված տեղեկատվության, կամ սխալ կամ կողմնակալ հետազոտության տարածումից առաջ կամ հետո,

7) որոշակի արտարժույթով այնպիսի գործարքների կնքումը, որոնց հետևանքով արտարժույթի փոխանցում տեղի չի ունենում կամ արտարժույթի փոխանցումը տեղի է ունենում ընդամենը փոխհամաձայնության հիման վրա գործող անձանց միջև,

8) արտարժույթով գործարքի կնքումը, որի դեպքում գնման և վաճառքի պատվերները տրվում են նույն արտարժույթի էապես նույն ծավալի համար, էապես նույն փոխարժեքով և էապես նույն ժամանակահատվածում,

9) սակարկությունների մասնակցի (փոխհամաձայնության հիման վրա գործող սակարկությունների մասնակիցների) կողմից արտասովոր մեծ սպրեդի սահմանումը կամ պահպանումը,

10) արտարժույթի գնման և (կամ) վաճառքի այնպիսի փոխարժեքի հրապարակումը, որի արդյունքում կտրուկ և էականորեն մեծանում է տվյալ արտարժույթի համար իր կողմից մինչ այդ հրապարակված գնման և վաճառքի փոխարժեքների միջև եղած տարբերությունը,

11) բորսայում սահմանված տվյալ արտարժույթի գնման (վաճառքի) լավագույն փոխարժեքից էապես բարձր կամ ցածր փոխարժեքի հրապարակումը,

12) սույն կետի 1-ից 11-րդ ենթակետերում չնշված, սակայն նույնաբնույթ այլ գործողությունները:

11. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված գնային չարաշահման ազդակները բավարար պայման չեն դեպքը գնային չարաշահում որակելու համար:

## ԳԼՈՒԽ 5. ԳՆԱՅԻՆ ՉԱՐԱՇԱՀՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻՆ ՏԵՂԵԿԱՑՈՒՄԸ

12. Բորսան, սակարկությունների մասնակիցները, արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառք, արտարժույթի առուվաճառք իրականացնող անձինք Կենտրոնական բանկին անհապաղ տեղեկացնում են գնային չարաշահումների վերաբերյալ իրենց ունեցած ցանկացած հիմնավոր կասկածի մասին:

13. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված տեղեկացումը Կենտրոնական բանկ է ներկայացվում բանավոր, թղթային կամ էլեկտրոնային եղանակով: Բանավոր կերպով տեղեկացնելու դեպքում Կենտրոնական բանկը կարող է պահանջել, որպեսզի ոչ ուշ, քան բանավոր տեղեկացմանը հաջորդող օրվա ավարտը բանավոր հաղորդած տեղեկատվությունը ներկայացվի գրավոր ձևով: Բանավոր տեղեկացումը Կենտրոնական բանկին կատարվում է Կենտրոնական բանկի կողմից տրամադրված հեռախոսահամարներով և (կամ) Կենտրոնական բանկի համապատասխան իրավասու ստորաբաժանմանը հաղորդելու միջոցով:

14. Սույն կանոնակարգի 0-րդ կետում նկարագրված տեղեկությունները պետք է պարունակեն.

1) կասկածելի գործարքի նկարագրությունը, ներառյալ՝ արտարժույթի տեսակը, գործարքի և/կամ հանձնարարականի տեսակը,

2) կասկածի հիմնավորումը,

3) գործարքի կողմերի ինքնությունը պարզելու միջոցները.

4) կասկած հայտնող անձի կարծիքով՝ էական համարվող այլ տեղեկություններ:

15. Եթե սույն կանոնակարգի 0-րդ կետում նշված բոլոր տեղեկությունները հասանելի չեն կասկածը հայտնող անձին, ապա կասկածի վերաբերյալ տեղեկացումը պետք է պարունակի առնվազն կասկածի հիմնավորումը:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի թիվ 225-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին*[*]

Հիմք ընդունելով «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հուլիսի 28-ի ««Հաճախորդների բողոք-պահանջների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ» կանոնակարգ 8/04-ը հաստատելու մասին» թիվ 225-Ն որոշմամբ հաստատված «Հաճախորդների բողոք-պահանջների քննության գործընթացը կարգավորող ներքին իրավական ակտերին ներկայացվող նվազագույն պայմաններ և սկզբունքներ» կանոնակարգ 8/04-ում (այսուհետև՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) Կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) ***Բողոք-պահանջ***՝ հաճախորդի կողմից ընկերությանը գրավոր ներկայացված բողոք, որը կապված է ընկերության՝ իր կողմից մատուցված ծառայությունների գծով պարտականությունների խախտման հետ և պարունակում է գույքային պահանջ: Ընդ որում, բողոք-պահանջը պետք է առնվազն ներառի հաճախորդի անունը, ազգանունը, նրա հետադարձ կապի միջոցները (բնակության վայրը և հեռախոսահամար), ստորագրությունը, ինչպես նաև բողոք-պահանջի նկարագրությունը:»:

2) Կանոնակարգի 10-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10. Ընկերության ցանկացած աշխատակից, ով ստացել է հաճախորդի բողոք-պահանջը, կամ ում հաճախորդը հայտնել է բողոք-պահանջ ներկայացնելու ցանկության մասին, ուղղորդում է հաճախորդին պատասխանատու աշխատակցի մոտ, ինչպես նաև տրամադրում պատասխանատու աշխատակցի հետ հաղորդակցման միջոցների մասին տվյալներ (հեռախոս, էլեկտրոնային հասցե, այլ):»:

3) Կանոնակարգը լրացնել 16.1-րդ և 16.2-րդ կետերով՝ հետևյալ բովանդակությամբ.

«16.1. Այն դեպքում, երբ հաճախորդի կողմից ներկայացված գրությունը համապատասխանում է սույն Կանոնակարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջներին, ընկերությունը այն դիտարկում է որպես բողոք-պահանջ՝ անկախ այդ գրության անվանումից (դիմում, պահանջ, բողոք-պահանջ և այլն) կամ անվանման բացակայությունից ու ձևից և տալիս է վերջնական պատասխան՝ «Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

16.2. Ընկերությունը բողոք-պահանջ ստանալիս կամ այդ բողոք-պահանջի քննության ընթացքում չի կարող հաճախորդից պահանջել այնպիսի փաստաթղթեր.

1) որոնք անհրաժեշտ չեն բողոք-պահանջը կամ դրա հիմքում ընկած հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հիմնավորելու կամ հաճախորդին նույնականացնելու համար, կամ

2) որոնք հասանելի են ընկերությանը տվյալ հաճախորդին մատուցած ծառայությունների բերումով, և հաճախորդի գրավոր հավաստմամբ՝ դրանցում սահմանված տվյալները չեն փոփոխվել:»:

4) Կանոնակարգի 17-րդ կետը լրացնել 6-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«6) Տեղեկատվություն այն մասին, թե բողոք-պահանջի գրավոր պատասխանով բավարարված չլինելու դեպքում հաճախորդն ինչ ժամկետներում իրավունք ունի դիմել ֆինանսական համակարգի հաշտարարին:»:

5) Կանոնակարգի Հավելված 2-ի առաջին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Սույն գործընթացը վերաբերում է հաճախորդի կողմից ընկերության դեմ ներկայացված այն բողոք-պահանջին, որը կապված է ընկերության կողմից մատուցվող ծառայությունների հետ և պարունակում է գույքային պահանջ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

***ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ***
***16 նոյեմբերի 2010 թ., Ն301-Ն***

---

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
*Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2010 թ. նոյեմբերի 9-ին:*
*Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 27.01.2011 թ. (ՀՀՊՏ N4 (387), 15.02.2011):*

# ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

(ՀՈՒՆՎԱՐ 2011)

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի «ՀՀ ԿԲ տեղեկագիր» ամենամսյա պարբերականի «Դրամավարկային ամփոփագիր» բաժինը ներառում է ՀՀ ԿԲ խորհրդի 2011 թվականի փետրվարի 8-ի նիստի «2011 թվականի փետրվար ամսվա վերաֆինանսավորման տոկոսադրույքի վերաբերյալ» արձանագրությունը, ինչպես նաև դրամավարկային, արտաքին, հարկաբյուջետային և իրական հատվածների, ՀՀ վճարահաշվարկային և ֆինանսական համակարգերի ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Իրական հատվածի (բացառությամբ բնականոն գնաճի) և արտաքին հատվածում ընդգրկված ապրանքների արտահանման ու ներմուծման վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունն է (http://www.armstat.am), իսկ հարկաբյուջետային, արտաքին հատվածի, դրամավարկային և ֆինանսական վիճակագրության, բնականոն գնաճի և ՀՀ վճարահաշվարկային համակարգի վերաբերյալ տեղեկատվության աղբյուրը՝ ՀՀ կենտրոնական բանկը: Դրամավարկային և ֆինանսական վիճակագրությունում ընդգրկված է դրամավարկային ցուցանիշների, ֆինանսական շուկայի և ֆինանսական համակարգի հիմնական ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն:

Դրամավարկային ցուցանիշները կազմված են համաձայն ՀՀ ԿԲ «ՀՀ դրամավարկային և ֆինանսական վիճակագրության ձեռնարկի», որը տեղադրված է ՀՀ ԿԲ «Տնային էջի» «Վիճակագրություն» բաժնում:

